

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հասարակական ընկալման փոփոխությունը

Համառոտագիր



Մարդկային
գարգացման
միջազգային
կենտրոն

Պատերազմի աստժո ախորժակն էլ ուտելիս է բացվում...

Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների տևողությամբ Ղարաբաղյան պատերազմն արևաբամ արեց երկու ժողովուրդներին, քայքայեց տնտեսությունները: Հակամարտության արդյունքում տարածաշրջանում մեծացավ գլոբալ ուժային կենտրոնների ազդեցությունը, իսկ երկրները հայտնվեցին քաղաքական անկայունության մարտահրավերների բովում: Կանոնավոր բանակների ձևավորմանը զուգընթաց, ռազմական տեխնիկայի ու ֆինանսական միջոցների ծավալման արդյունքում աճում էին մարդկային կորուստները: Ռազմական գործողություններին վերջին ամիսներին պատերազմի յուրաքանչյուր օրը կողմերից տասնյակ զոհեր էր պահանջում: 1994 թվականի մայիսի 12-ի հրադադարն ազդարարեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության ակտիվ պատերազմական փուլի ավարտը:

Ցավագին դիմակայություն. իշխանությունների հրադադարը

Պատերազմը թերևս շարունակվեր, եթե պատմության արյունոտ էջը չըջվեր սեփական ծանրության տակ: Ցավագին դիմակայության (hurting stalemate) երևույթը դարերի ընթացքում բացմիցս հարկադրել է պատմերազմող գրեթե հավասարազոր կամ «հավասարաթույլ» կողմերին շունչ քաշելու համար զենքը վայր դնել՝ զոհե ժամանակավորապես: Ֆինանսական և հատկապես մարդկային ռեսուրսների շոշափելի պակասը, հետագա կորուստներից խուսափելու և հակառակորդի հետագա հարձակումներից ապահովագրվելու ձգտումը, ինչպես նաև գլոբալ ուժի կենտրոնների, հատկապես՝ Ռուսաստանի ճնշումը երկու երկրների իշխանություններին անմիջականորեն մոտեցրին հրադադարի հաստատման անհրաժեշտությանը: Ակնհայտ էր, որ պատերազմական գործողություններն էականորեն սահմանափակում են միջազգային շուկայում ադրբեջանական սև ոսկու շահագործման հնարավորություններն ու տարածաշրջանային խոշոր տարանցիկ ծրագրերը և, հատկապես, հենց ժամանակի քաղաքական ղեկավարների կողմից դրանցից օգտվելու հնարավորությունները: Հարձակողական, սակայն կորուստների պատերազմը բարոյալքել էր ադրբեջանական բանակն ու նրա մարտունակությունը հավասարացրել զրոյի: Հարձակողական ավանդական տրամադրությունները, զինված ուժերի հարձակողական «հագուկապն» ու հռետորությունն իրենց հերթին բացառում էին պաշտպանական պատերազմը: Ավելին, ադրբեջանական նորաստեղծ պետականությունն արդեն քանիցս ցնցած ներքաղաքական անկայունությունը հերթական իշխանություններին թերևս կուլ կտար պաշտպանական պատերազմի մասին ակնարկի պարագայում անգամ: Միաժամանակ, հրադադարը ոչ միայն ելք էր ստեղծված իրավիճակից, այլև իրական հնարավորություն էր ստեղծում թե՛ դիվանագիտական, թե՛ ռազմական հետագա հարձակման նախապատրաստման համար: Վերջինիս ապացույցը թերևս Լիսաբոնի գազաթափողովն էր՝ հրադադարից երկու տարի անց, ինչպես նաև Ադրբեջանի իշխանությունների հետագա հռետորությունն ու պատերազմական ահազանացող պատրաստությունները: Տասնամյակների հեռվից դժվար է դատել, որքանով են ճիշտ գնահատվել ռազմական գործողությունների հետագա քաղաքական հնարավորություններն ու հետևանքները ժամանակի հայկական ղեկավարության կողմից: Ակնհայտ է սակայն, որ հայկական իշխանությունները հրադադարը ընկալում և մատուցում էին որպես հաղթական պատերազմի ավարտ: Ժողովուրդը նման ընկալումը լիարժեքորեն ընդունում և ողջունում էր:

Իշխանությունների խաղաղություն, թե՛ ժողովուրդների պատերազմ

Համամարտությունների փոխակերպումը ժամանակի մարտահրավերների ելքն է, սակայն լուծումը չէ: Հրադադարը, «սառեցնելով» հայ-ադրբեջանական հակամարտությունն ու թողնելով խնդրի խաղաղ կամ պատերազմական լուծումն ավելի լավ ժամանակների, առաջ բերեց նոր մարտահրավերներ: Ներկա լրջագույն մարտահրավերը թերևս ոչ թե հակամարտության

Երևան 0001
Սայթ Նուվա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org



կարգավորումն է, այլ դրա կարգավորումը խաղաղ ճանապարհով: Հատկանշական է, որ եթե դարիս առաջին տասնամյակի առաջին կեսում ինդորի հասարակական ընկալման մեջ առավելապես կարևորվում էր ներկա հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը, ապա վերջին տարիներին ավելի առաջնային է դառնում տարածաշրջանում երկարատև խաղաղության հաստատման հասարակական պահանջը: Հայաստանի և Արցախի քաղաքացիների ընկալմամբ հակամարտության կարգավորումն, ըստ էության, երկարատև խաղաղության հետ անմիջականորեն չի զուգորդվում: Ադրբեյջանի իշխանությունների ռևանշիստական քաղաքականությունն ու ծավալած սպառազինության մրցավազքը, հարևան Թուրքիայի կողմից Հայաստանի անթույլատրելի շրջափակումն ու դրա պայմանավորելը հակամարտող կողմի վրա միակողմանի ճնշմամբ, ադրբեյջանական լրատվամիջոցների, քաղաքական և հասարակական գործիչների ռազմատենչ հռետորականությունը, միջազգային հանրության երկդիմի քաղաքականությունն ու երկակի չափանիշները թերևս այն գործոններն են, որոնք անմիջականորեն ազդում են հայ հասարակության տրամադրությունների վրա: Իրավամբ, նման պարագայում տարօրինակ չէ, որ հայաստանցիներն ու արցախցիները մոտ ժամանակներում երկարատև խաղաղության հաստատման հանդեպ թերահավատ են, վստահ չեն ապագայի հանդեպ, իսկ հակամարտության խաղաղ կարգավորման արդյունքում անգամ երկարատև խաղաղություն չեն ակնկալում: Ավելին, թեև հասարակությունն ու իշխանությունները շարունակում են օգտվել հրադադարի ու կարգավորման խաղաղ գործընթացի բազմաթիվ առավելություններից, այդուհանդերձ, ցավագին դիմակայության մի շարք առանձնահատկություններ ժամանակի հետ կա՛մ անենում կա՛մ փոխակերպվում են՝ հասարակական տրամադրության ձևավորման վրա թողնելով սոսկ երկրորդական ազդեցություն: «Եթե երկու օր անց պիտի պատերազմ լինի, վաղվա խաղաղությունն ինչի՞ս է հարկավոր»: Այս մտավախությունը կարծես դառնում է գերիշխող: Կարգավորման գործընթացում քաղաքացիներն ամենից առաջ կարևորում են երկարաժամկետ անվտանգությունը:

Դափնետերևը՝ բազեի կտուցում

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հասարակական ընկալման փոփոխությունները, հարկա՛վ, պիտի մտահոգեն հակամարտության խաղաղ կարգավորմանը շահագրգիռ բոլոր կողմերին՝ ինչպես երկու երկրների իշխանություններին, այնպես էլ գործընթացում ներգրավված միջնորդներին: Անթույլատրելի է այս երևույթի հանդեպ աչք փակելը: Ասենք այս իրողությունն իրական քաղաքականության մեջ հաշվի չառնել հնարավոր էլ չէ: Իսկապես, եթե հակամարտության ընթացքի ղեկն ու հակամարտող ժողովուրդների ճակատագիրը ժամանակին իշխանությունների ձեռքում էր, ապա այսօր իշխանությունների ճակատագիրն է մեծապես կախված հակամարտության կարգավորման ընթացքի վերաբերյալ ժողովրդի ընկալումից: Այս առումով իրական ժողովրդավարության ընթացքն անկասելի է: Իսկ կարգավորման գործընթացին բաց աչքերով նայողի համար հետևություններն ակնհայտ են: Հայաստանի և Արցախի քաղաքական ղեկավարությունը պիտի կարգավորման գործընթացում օրակարգ բերի երկարատև խաղաղության հաստատման շուրջ հասարակական մտահոգություններն ու դրանց արձագանքելու համար անհրաժեշտ պայմանները: Անհրաժեշտության դեպքում նաև նախապայմանները: Այսպես, հրադադարի ռեժիմի մոնիտորինգին զուգընթաց, հարկավոր է շարունակական մոնիտորինգ իրականացնել նաև հասարակության վստահությունը խաթարող գործողությունների՝ «անվստահության ագրեսիայի» հանդեպ: Միջազգային դերակատարները պիտի բացառեն ուժային որևէ միջամտություն հակամարտության կարգավորմանը, այդ թվում՝ Թուրքիայի, կողմից: Առավել մեծ ուշադրություն պետք է դարձնել կարգավորման գործընթացի վերաբերյալ երկու երկրների հասարակություններին իրազեկմանն ու ընկալմանը: Այսպես, հարկավոր է առավել հրապարակային ու հետևողական դարձնել բանակցային գործընթացը՝ բացառելու համար երկու երկրների հասարակություններին մատուցվող ուղերձների հակասականությունն ու ապահովելու համար դրանց ուղղվածությունը երկարատև խաղաղության հաստատմանը: Միաժամանակ, անհրաժեշտ է շարունակաբար տեղեկանալ հակամարտության կարգավորման ընթացքի վերաբերյալ երկու ժողովուրդների ընկալմանը և հնարավորինս ապահովել դրանց զուգամիտությունը:

Մի բան ակնհայտ է: Խաղաղության խորանում պատերազմի աստծո կուռքն անելիք չունի...

Համառոտագիրը մշակվել է ՄՉՄԿ 2008թ-ի մարտի 2-ին կայացած՝ «Նոր փուլ L7 հիմնախնդրում» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ: